ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ե 40/11-1908/18
«20» 04 20 թ.

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, (+374 60) 37 26 56
Ֆաքս (374 10) 44-29-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ
ՊԱՐՈՆ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Ի պատասխան Ձեր 18.04.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7185-18 գրությանը և համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 52-րդ կետի, ներկայացնում ենք Խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունը հետևյալի մասին.

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում, սննդամթերքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի N9 չափաբաժնի մասով 30.03.2018թ. Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ն ներկայացրել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքը՝ ընդդեմ «Խոսրով Ջահինյան» Ա/Ձ-ի և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնաբերաբար կասեցվել էր գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ: Հաշվի առնելով, որ թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքի վերաբերյալ որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում, «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝

շարունակելու «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի N9 չափաբաժնի գնման գործընթացը և հիմք ընդունելով 17.04.2018թ.-ին կայացրած ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 որոշումը՝ մերժել Ա/Ձ Խոսրով Ջահինյանի կողմից ներկայացված հայտը և N9 չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հարգանքով՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ ՔԿՎ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -37.05.30